

Դաշնակիցների Գերագույն հանձնակատար Վ. Հասկելի
կազմակերպչական, մարդասիրական և քաղաքական
գործունեությունը Հայաստանում 1919թ.

1919թ. հունվարից սկսած՝ Փարիզի հաշտության կոնֆերանսը քննարկում էր Առաջին աշխարհամարտի հետևանքները՝ տնտեսության ահավոր քայլայումը և համատարած ավերածությունը վերացնելու անհրաժեշտությունը: Խաղաղ մթնոլորտը վերականգնելու համար ԱՄՆ-ը նախաձեռնեց Երկրորդ աշխարհամարտից հետո կիրառված Մարշալի ծրագրի նման ու դրա կարապետ՝ մարդասիրական ներխուժման իր գործողությունը: Խոսքը 1919 թվականին սննդի նատակարարման ու երկարաժամկետ վարկերի մասին է, քանզի Եվրոպան ի վիճակի չեր մարելու Ամերիկայում արդեն իսկ կուտակված պարտքերը առանց նոր ներդրումների և ապրանքի ներմուծման: Հետևաբար ԱՄՆ-ն ու Փարիզի վեհաժողովը ստեղծեցին ազգային ու միջազգային բնույթի նպաստամատույց գործակալություններ: Եվրոպացիները Ամերիկային առաջարկում էին փոխանակել իրենց պարտքերը տարբեր հողերի հետ, սակայն նրանք չէին զհցում նավթաբեր Միջագետքը կամ Միջերկրականը և դրանց փոխարեն առաջ էին քաշում խնդրահարույց, հսկայական ճիգեր պահանջող Արևմտյան Հայաստանը: Կողմերն ընդհանուր հայտարարի չեկան և կանգ առան բնակչությանը տեխնիկական օգնություն ապատուվելու հարցի վրա:

Միացյալ Նահանգներում կազմավորվեցին պետական Հատիկային կորպորացիան, Ամերիկան պարենավորման վարչությունը // -49 (ԱՊԿ)¹ և Ամերիկյան նպաստամատույց վարչությունը (ԱՆՎ): Վերջին երկու գործակալությունների գլուխ էր անցել Յ. Հոլվերը: Կոնգրեսը 150 մլն դոլար է հատկացրել հացահատիկը գնելու համար և առաջին երկու հիմնարկները հիմնավորվեցին Փարիզում: Այնտեղ ԱՄՆ-ի ապագա նախագահը իսկ 1919թ. հունվարին Վեհաժողովի հաստատված՝ վերականգնման ու նպաստի գծով տնօրեն Յ. Հոլվերը իր ենթակայությամբ ընդունեց 2.500 աշխատակցի և ստացավ անձնական ամերիկյան նվիրատվությունների ավելի քան 325 մլն դոլար²: Այնուհետև՝ 1919թ. փետրվարի 24-ին, օրենսդիրները հաստատեցին 100 մլն դոլար հատկացնելու մասին հրամանագիր՝ ԱՆՎ-ը ձևավորելու և նպաստ մատուցելու գործի համար³: Կոնգրեսը վերապահում էր արել, թե

¹ Գործում էր 1917թ. մայիսի 9-ից 1919թ. փետրվարի 7-ը:

² Առաջին բյուջետային գումարի մասին տվյալներ՝ H. Hoover, The Memoirs of Herbert Hoover. Years of Adventure 1874-1920. NY, Macmillan, 1952, p.245, 270; իրենց 7,9 մլն հասած վարչական ծախսերով հանդերձ, գործակալությունները ԱՄՆ-ին ապահովել են 60 մլն դոլ. եկամուտ՝ p.270: 325 մլն դոլ. գումարը վերաբերում է 1919-1922թթ.՝ p.302. 312, 396:

³ Organization of American Relief in Europe, 1918-1919: Including Negotiations Leading Up to the Establishment of the... Director General of Relief at Paris by the Allied Powers: Documents. Ed. by S.L. Bane, R.H. Lutz. Stanford, Ca, Stanford University Press. 1943, p.2-3; R. Hovannissian, The Republic of Armenia, in 4 vols., vol.I The First Year, 1918-1919. Berkeley & Los Angeles, University of California Press, 1971, p.138.

փողը տրամադրվում է բարեկամ Երկրներին, ինչպես նաև «հայերին, ասորիներին, հույներին ու... Թուրքիայի ներկա կամ նախկին հպատակ Փոքր Ասիայի այլ բնակիչներին» օգնելու համար⁴: Օրենսդիրները կազմավորեցին ԱՆՎ-ը՝ այդ նախագիծն իրականացնելու և նույն՝ 1919թ. հուլիսի 1-ին ավարտելու կարգադրությամբ:

Մայոր Զ.Գրինը նշանակվում է ԱՆՎ-ի ներկայացուցիչ Թիֆլիսում, իսկ մայոր Չ.Ս.Ֆորբսը, որպես Երևանյան գրասենյակի տնօրեն, հուլիսի 11-ից //50 անցնում է իր պարտականությունների կատարմանը: Պետական գործակալությունները հաստատում էին ֆերմերներից գնվող հացի գինը, դրամատների վարկային առավելագույն դրույքը, նրանք օգտվում էին ռազմական վարկային առավելագույն դրույքը, նրանք օգտվում էին ռազմական վարկային առաջարկությունից և վարձատրում առևտրական նավատորմը՝ նպաստի բեռները փոխադրելու համար: Ուշագրավ է, որ ԱՆՎ-ի պաշտոնյա Չ.Ֆորբսի ծառայության առաջնային իսկ օրից՝ հուլիսի 11-ից, ԱԽատիսյանը սկսել է քննարկել 30 հազար գինվորների համար համազգեստ գնելու հնարավորությունը⁵:

Միայն այդ պետական ատյանների միջոցով 1919թ. առաջին հինգ ամիսների ընթացքում Հայաստանը ստացել է 18.758 տ հացամթերք, 619 տ լոբազգի, 513 տ խտացրած կաթ՝ 3 մլն դոլ ընդհանուր արժողությամբ: Եվս 15.170 տ ցորեն տեղափոխվել է Կ.Պոլիս: Միայն մայիսին Բաքումով Հայաստանի Հանրապետություն է առաքվել 12.307 տ հաց և 282 տ խտացրած կաթ⁶: Մեկ շնչի հաշվով ապահովվում էր օրական 200 գ հացից քիչ ավելի:

ԱՄՆ պետական ոլորտից դուրս Փարիզի Գերագույն խորհուրդը հիմնադրեց նպաստի հարցերով գլխավոր տնօրենի պաշտոն՝ վստահելով այդ պարտականությունները ԱՄՆ-ի քաղաքացու՝ նույն ինքն Յ.Յուլվերին:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներին, ապա այստեղ ԱՆՎ պետական նոր կառուցի կողքին դեռևս 1915թ. սեպտեմբերի 16-ից գործում էր Հայ օգնության կոմիտեն, այնուհետև նոյեմբերի 1-ից՝ Հայ-սիրիական ամերիկյան նպաստամատույց կոմիտեն: 1918 թվականին Հայ-սիրիական կոմիտեն ընդարձակվում և վերափոխվում է Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի (ԱԱԱՕԿ կամ Ամերկոմ), իսկ 1919թ. օգոստոսի 6-ից այն կրում է կարճ Մերձավոր Արևելքի նպաստամատույց (ՄԱՆ) անվանումը⁷: ԱԱԱՕԿ-ի Կովկասյան մասնաճյուղը վարում էր Վանի երկարամյա քարոզիչ, փորձառու և անվանի //51 Է.Յարոսուն: Նշենք, որ 1919թ. կեսին Ամերկոմը հավաքել է 36 մլն դոլարից ավելի նվիրատություն, հետևաբար ՀՀ-ին

⁴ Congressional Record, 65th Congress, 3rd Session. Wash., GPO, 1919, vol.LVII, pt.2, p.1372. Տես նաև՝ Organization of American Relief in Europe, 1918-1919, p.291-292.

⁵ Հայաստանի Ազգային արխիվ, Երևան (այսուհետև՝ ՀԱԱ), §.200, գ.1, գ.304, թ.13:

⁶ United States National Archives, Washington D.C. (այսուհետև՝ US NA), Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 180.03501/document 24/ App.216/ Encl. և doc.26/App.236:

⁷ The Emergence of Humanitarian Intervention: Ideas and Practice From the Nineteenth Century to the Present. Ed. by F.Klose. Cambridge, Cambridge University Press, 2016, p.200-201.

հասցրած բեռների 45 տոկոսը կազմում էր ուղիղ և անհատույց բարեգործություն:

Հասարակական ՄԱԱՕԿ-ը՝ նախագահ Վ.Վիլսոնի անմիջական մասնակցությամբ, անցկացնում էր համազային դրամահավաքներ: Իսկ Նյու Յորքում տեղակայված նրա շտաբակայանում որոշվում էր այդ գումարների հստակ գործադրումը: Կոմիտեն ուներ Տնօրենների խորհուրդ և առանձին հսկիչներ (հատուկ հանձնակատարներ), որոնք այցելում էին Հայստանի տարբեր վայրեր՝ ընդհանուր վիճակն ու դաշտային ծառայողների աշխատանքը գնահատելու նպատակով: Ամերկոնը որպես հիմք էր ընդունում նախորդ, քառոզական կազմակերպության՝ Արտերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան վարչության (ԱԱԼԱՎ) փորձն և աշխատակազմը: Տվյալ վարչությունը, որպես համազգային, կենտրոնացված հաստատություն, 1835թ. սկսած, գործում էր Արևմտյան Հայաստանում. իր առաջին կայանը գետեղել էր Երզրում քաղաքում⁸: Քարոզիչները սերտորեն համագործակցում էին ԱՄՆ Պետդեպարտամենտի հետ: Փաստենք, որ ԱԱԼԱՎ-ի անդամները շատ հաճախ վերադառնում էին իրենց կայաններն ու սիրով պայմանագրեր կնքում Ամերկոնի հետ: //52

Է.Յարոնի, Զ.Բարտոնի, Թ.Աշերի նման քարոզիչներից ողբալից ազդանշաններ ստանալուց հետո բարեգործները մեր տարածաշրջանում, հատկապես 1918թ. թուրքական հարձակման ամքողջ գոտում ու Հայաստանի Հանրապետության սահմաններում ծավալված մարդկային սոսկալի աղետի առաջին ազդարարներ դարձան: 1919թ. մարտ-ապրիլին ծզգրիտ տեղեկություններ ստանալու մտադրությանը նրանք հսկիչներին են ուղարկում Բաթում – Թիֆլիս - Երևան - Ալեքսանդրապոլ - Էջմիածին - Կարս - Իգդիր երթուղով: Մայիս-հունիսին ԱԱԼԱՎ-ի քարտուղար Զ.Բարտոնը շրջայց է կատարում Մարդինը, Դիարբեքիրը, Խարբերդը, Մալաթիան, Կեսարիան, Սեբաստիան, Մարզվանն և Անատոլիայի խորքերը:

Ուղևորություններից հետո՝ 1919թ. մարտի 30-ին, հսկիչները իրազեկում են Նյու Յորք ու պետքարտուղար Ռ.Լանսինգին պատուհասի աննախադեպ ուժգնության մասին: Առանց Կոնգրեսի և բյուջետային ուղիղ հատկացումների՝ մասնավոր բարեգործությունը ի զորու չէր կարգավորելու նման խնդիրը:

Ամերկոնի հանձնակատարներ Ու.Զ.Սմիթը, Զ.Թ.Մեյնը գեկուցեցին 35-հազարանոց Ալեքսանդրապոլում առնվազն 68 հազար գաղթականների կուտակման մասին: Յետագայում Ա.Խատիսյանը նրանց տեղեկացրեց, թե Երբեմնի 33-հազարանոց Երևանում հավաքվել է 110 հազար հոգի⁹: Հսկիչ-

⁸ ԱԱԼԱՎ-ի արխիվային տվյալներին համաձայն՝ Կարինում տնավորվել էր Նարան Բենջամենը՝ Վիլյամ ու Սերի Ջեքսոնների հետ՝ Houghton Library of Harvard University, Cambridge, MA, Papers of the American Board of Commissioners for Foreign Missions, vol.3, Roll 676:

⁹ Maintenance of Peace in Armenia. Hearing before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66th Congress, 1st Session on Senate Joint Resolution № 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia. Wash., GPO, 1919, p.87 (այսուհետև՝

//-53 Աերը հաղորդում էին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ա.Սարգսյանի ծանուցումը քաղաքի փողոցներից օրական մինչև 20 անտունի մարդկանց դիեր հավաքելու և նրանց ընդհանուր շիրմներում թաղելու մասին: Իրավիճակը նմանապես ծանր էր Աշտարակում (30 մեռյալ), Վաղարշապատում (25 ննջեցյալ) և Իգդիրում¹⁰: Վերջինում անգամ գրանցվել են դիակերության դեպքեր: Ինչպես Խզիրը, այնպես էլ ամբողջ Սուրմալուի գավառը առանձնանում էին առավելագույն, աղետալի մահացության քանակով: Հատուկ հանձնակատարների գնահատումներով՝ Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և Յուսսիսային Կովկասի տարածքում կար մինչև 750 հազ. գաղթական, իսկ բուն ՀՀ-ի սահմաններում՝ 500 հազ. հոգուց ոչ պակաս¹¹: Հայաստանում կուտակված փախստականներից առնվազն 200 հազ. մարդ հայտնվել էր սովամահության եզրին¹²: 1919թ. օգոստոսի 28-ի դրությամբ ԱՄՆ պետքարտուղար //54 Ռ.Լանսինգը այդ նույն վտանգված խումբը ներկայացնում էր որպես 300-հազարանոց զանգված¹³:

Վիճակագրության առնչությամբ նշենք շրջանառության մեր դրված մեծությունների մոտավոր, գնահատու բնույթը: Մեր ունեցած թվերը բխում են Յայասստանի տեղական ու հանրապետական իշխանությունների, Ա.Ա-հարոնյանի փարիզյան պատվիրակության, անգլիական զորքի՝ գեներալ Վ. Բիչի տրամադրված տվյալներից, ինչպես նաև ՍԱԱԾԿ-ի հսկիչների դիտարկումներից: Յետևաբար, հարկավոր է հաշվի առնել որոշ հանգամանքներ:

Maintenance of Peace); US NA, RG 256, 184.021/323/folio 5, M820 General Records of the American Commission to Negotiate Peace, 1918-1931. American Delegation, Field Mission of the American Delegation, Harbord Military Mission to Armenia, Roll 232, microfilm publications. Wash., The National Archives and Records Service, General Services Administration, 1970, պահպան է ՀԱՀ ֆոնդերում, միկրոֆազավեճների հավաքածու № 4, (հետայրության մի), տես նաև՝ Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., 2-е доп. изд. Ереван, Инт-истории НАН РА, 2012, с.276 (հետայրության մի) Армения в документах):

¹⁰ ԱՆՎ-ի 1919թ. մարտի 15-ի տվյալները՝ Լոնդոնում Քայ անզգային պատվիրակության ներկայացուցչի համար՝ ՀԱԱ, §.430, գ.1, գ.1267, թ.2:

¹¹ Տե՛ս 1919թ. հուլիսի 3-ի՝ պետքարտուղար Ո.Լանսինզից, դեսպան Յ.Ռլայքից ու գեներալ Տ.Բլիշից կազմված Փարիզի ամերիկյան պատվիրակության հեռագիրը. *Papers Relating to the Foreign Relations of the United States*. 1919. In 2 vols. Vol.II. Wash., US GPO, 1934, p.825, կամ հունիսի 25-ի և 28-ի Յ. Մորգենբաուի և Զ. Հարբորդի նամականին. US NA, RG 59 General Records of the Department of State, class 760J.6715/document 89½/f.1, 3, T1193 Records of the Department of State Relating to Political Relations Between Armenia and Other States, 1910-1929, Roll 2, microfilm publications. Wash., The National Archives and Records Service, General Services Administration, 1975, ՂԱԱ, մհ 35: 500 հազար թիվը ներկա է 1919թ. մարտի 3-ին Փարիզի հաշտության կոնֆերանսին հղած Ա.Սիարոնյանի հուշագրում. ՂԱԱ, ֆ.200, գ.1, գ.193, թ.330: Ինչպես նաև ԱՍՍ Ծերակույտի փաստաթղթերում: Վերջինները պարունակում են Ամերկոնի հսկիչին տրամադրած՝ Թիֆլիսում տեղակայված անգլիական հրամանատարության տվյալները՝ *Maintenance of Peace*, p.67 և p.85: Նշենք, որ բրիտանացիները, Ծերակույտի նյութերն ու ԱՆՎ-ի դեկավար Յ. Հուլվերը իրենց թվերը վերագրում էին հատկապես արևմտահայությանը, H. Hoover, op.cit., p.387:

¹² Maintenance of Peace, p.85, 87; R.Hovannisian, op.cit, vol.I, p.135-136.

¹³ US NA, RG 59, 860J.01/62/f.3, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, Roll 1, microfilm publications. Wash., The National Archives and Records Service, General Services Administration, 1975, RUU, üh 49:

Այն է. ՀՀ կառավարութունը չուներ լիովին ճշգրիտ պատկեր՝ հաշվառման նրա հնարավորությունները սահմանափակ էին, տուժածները սակավ հույսներ էին կապուն պետության հետ ու հաճախակի փոխադրվում տեղից տեղ: 1919թ. գարնանն իսկ նրանց հաջողվել է բնակեցնել 142 լքված ու կիսավեր գյուղ և սկսել թեկուզ նվազագույն տնտեսական կյանք¹⁴: Սովոր, տիֆն ու խոլերան, դողերոցքը, անօթևան կյանքը և որբությունը, հարազատների հաճախակի կորուստները, տարագիր արևելահայոց վիթխարի զանգվածները, որոնք ստիպված էին պախչել Կարսի մարզից ու Գանձակից, Շարուր-Նախիջևանից ու Պարսկաստանից, սաստկացնում էին անորոշության աստիճանը:

Միևնույն ժամանակ, կասկածից վեր էր մարդասիրական աղետի այդպիսի մի իրավիճակ, երբ խոսքը ոչ միայն արևմտահայերի, այլև ամբողջ հասարակության ֆազիկական պահպանման մասին էր: Երկրի համատարած քայլայումը իսկական պատուհաս էր դարձել, իսկ հսկիչները լավ էին տիրապետում տասնամյակներով կուտակված մարդկանց թվին՝ ըստ հացի պահանջի, որբերի քանակին և հավաքատեղերում գաղթականների խտության հետ առնչվող մեթոդների: Նրանք տստակ գիտակցում էին՝ որքան գերադասելի էր մեծացնել թվերը, քան նվազեցնել, քանզի Յայաստանին //55 կենսականորեն անհրաժեշտ էր հասարակական ընդարձակ կարեկցանքը, իսկ լրացուցիչ սննդամբերքը բոլորովին էլ ավելորդ չէր ծայրաստիճան հյուծված ժողովրդի համար:

Յամենահենք՝ միացյալ Յայաստանի պատվիրակության՝ 1919թ. օգոստոսի 23-ին Փարիզի վեհաժողովի քարտուղարությանը ներկայացված և «Յայաստանի իրավիճակը զինադադարից հետո» խորագրով հուշագրում ասվում է ՀՀ սահմաններում առկա 350-400 հազար արևմտահայ ու 100-150 հազար արևելահայ փախստականների մասին¹⁵: Սեպտեմբերի վերջին Յ. Յասկելը Պետդեպարտամենտ, Փարիզ և ՄԱՆ-ի շտաբակայանին է գեկու-

¹⁴ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.44, թ.16:

¹⁵ Նույն տեղում, գ.557, թ.41: Նույն 350 հազ. նշվել է ՀՀ Խնամատարության նախարար-րության 1-ին տեղեկագրում. ֆ.199, գ.1, գ.22, թ.4; կրկին մեջ բերել Վ.Կարդաշյանը՝ 1919թ. հոկտեմբերի 10-ին ԱՄՆ Շերակույտի ենթահանձնախրում. Maintenance of Peace, p.116, 120; 400 հազ. արևմտահայ՝ 1919թ. հունիսի 24-ի Փարիզի հայ Տեղեկատվական բյուրոյի հաղորդագրության մեջ՝ գ.131, թ.107: Նույնանման տվյալներ կան «Յայաստանի Յանրապետության կառավարությունը ճանաչելու առթիվ» տիտղոսի ներք ԱՄՆ Կոնգրեսին ներկայացված, 1919թ. նոյեմբերի 24-ին կազմված Յ.Քաջազնունու հուշագրում A Memorandum On the recognition of the government of the Republic of Armenia. Submitted by the Special mission of the Republic of Armenia to the United States. Presented by Mr.H.C.Lodge. 66th Congress, 1st Session, Document № 151. Wash., GPO, 1919 գ.498, թ.62 շրջ.: Ինչպես և Պողոս Նուբարի 1919թ. դեկտեմբերի 11-ին Վ.Կիլսոնին հղած նամակում՝ US NA, RG 59, 860J.01/201/Encl./f.6, T1192/Roll 2/մհ 38, Վ.Տատրյանը մեջբերում է մոտավոր 300 հազար՝ V.Dadrian, The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, Berghahn Books, 1995, p.348: Ի.Տերնոնը գրում է 1918թ. ամռանը ՀՀ-ում առկա 750 հազ. տարագիրների մասին, որոնցից 350 հազարը արևմտահայեր էին: 1919թ. սկզբին նույն տեղում կար 400 հազ. փախստական՝ Y.Ternon, The Armenian Cause. Delmar, NY; Caravan Books, 1985, p.43, 71:

ցել, թէ 800 հազար հայ Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում գուրք է գոյության միջոցներից: Իր հերթին, ԱՄՆ-ում 33 դիվանագիտական ներկայացուցիչ Գ.Փաստրմաճյանը նոյեմբերի 13-ին գրել է պետքարտուղար Ռ. Լանսինգին, իիշատակելով իր կառավարության իրավասությանը ենթակա 700 հազ. գաղթականներին ու տարագիր անձանց¹⁶: //56 Վ.Հասկելի գնահատանքով՝ այդ ընդհանուր թիվն ներառում է 150 հազար երեխայի ու 250 հազար անօքաննի: Միայն Հայաստանի Հանրապետության սահմաններում ամերիկյան մանկատները պատսպարում էին 30.255 սանի: Հոկտեմբերի դրությամբ 50 հազար երեխա ստանում էր տարբեր տեսակի օգնություն, այդ թվում՝ սննդամթերք: Մեր ամբոխալից հանրապետության պայմաններում տուժածների մարմնական և տնտեսական վերականգնան համար հարկավոր էր ամսե-ամիս ստանալ 7 հազ. տ հատիկ ու 500 հազ. դոլար¹⁷:

Ամփոփելով մեր վիճակագրական ակնարկը՝ կոկնենք այն եզրահանգումները, որոնք արդեն իրապարակվել են մեկ այլ հոդավծում. ամբողջ Անդրկովկասն ու Կովկասը շրջապատող փրկարար աշխատանքներն ընդգրկում էին 700-800 հազ. մարդ: Վերոնշյալ թիվը պարփակում է 500 հազ. գաղթականներին, որոնք գտնվում էին մեր նորակազմ հանրապետության եզրերում: Նրանցից հաջողվել է փրկել մոտավորապես 350 հազ. հոգի: Համադրելով բացմաթիվ աղբյուրները՝ հնարավոր է այդ կես միլիոնից զատել 350 հազարին հասնող արևմտահայերի: Նրանցից 220-250 հազարը կարողացել են ողջ մնալ¹⁸:

Անդրանիկ հաշվետվություններին գուգահեռաբար՝ նպաստի հարցերով գլխավոր տնօրեն Յ.Յուվերը ԱևՎ-ի պաշտոնյաններին ուղարկում է Կ.Պոլիս, որտեղ (Դերինջե ոչ մեծ նավակայանում և ավանում¹⁹) հիմնադրում են պարենի առաջին պահեստները: Ամերիկյան ցորենին շնորհիվ դրա սպեկուլյատիվ առևտուրը հաշված օրերում կտրականապես նվազում է, քանի որ տեղի գործարարները հացն առնում էին մեծածախ և իրականացնում մանրածախ կերպով՝ շրջանառության հիմքում ունենալով նախապես հաստաված //57 գները: Ճիշտ է, Յ.Յուվերը դժգոհ էր Բոսֆորի ափերում բացված մասնաճյուղի դեկավար Յ.Յեյնցի աշխատանքից: Նա ձգտում էր Վարչության հենակետը տեղափոխել Երևան և Թիֆլիս՝ տուժածներին ավելի մոտ գետեղելու մտադրությամբ: Գլխավոր տնօրենը քննադատում էր տեղական բարեգործական հաստատությունները՝ ջանք թափելով իր ձեռքում կենտրոնացնել նպաստամատուց բոլոր իրավասությունները: Հսկիչներն ել նմանա-

¹⁶ US NA, RG 59, 860J.48/10/f.1-2, T1192/Roll 7/նհ 36; և ֆ.200, գ.1, գ. 431, թ.57:

¹⁷ US NA, RG 59 860J.48/1/f.89-91, T1192/Roll 7/նհ 36; US NA, RG 256, 184.021/347/f.2, M820/Roll 232/նհ 4; և ֆ.200, գ.1, գ.366, թ.2-3 շրջ.:

¹⁸ G.Makmoulian, Management of the U.S. Relief and the Republic of Armenia, 1918-1920. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2008, № 1, էջ 99: էջ 112-113-ում՝ հոդվածին հայերեն ու անգլերեն ամփոփումներում 500 հազ. գաղթական (500 thousands of refugees) թվայլը ոչ ճիշտ թարգմանվել է որպես 500 հազ. արևմտահայ:

¹⁹ Գտնվում է Բոսֆորից 80 կմ արևելք:

պես անհրաժեշտ էին համարում փոխարինել ՄԱԱՕԿ-ի Կովկասյան մասնաճյուղի պետ կապիտան Զ.Օ.Էրրոլիխն մեկ այլ՝ ավելի հարմար ու փորձառու անձով:

Հատկապես ԱՆՎ-ն՝ ի դեմս Յ.Յուվերի, 1919թ. ապրիլի 8-ին պաշտոնական համաձայնագիր է կնքել Յայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի և ՀՀ ներկայացուցիչ Ա.Ահարոնյանի հետ: Այնուհետև ՀՀ խնամատարության նախարար Ս.Թորոսյանը և Ամերկոմի Յայկական մասնաճյուղի պետ կապիտան Զ.Ելդերը, հյուպատոս Ֆ.Վ.Սմիթի մասնակցությամբ, ապրիլի 12-ին ստորագրեցին ՀՀ տարածքում գտնվող բոլոր որբերին և Վրաստանում բացված նանկատները Կոմիտեի իրավասությանը հանձնելու «Պայմանները»: Բացի դրանից, բարեգործները պարտավորվում էին հոգալ Յայկական բարեգործական ընկերության, Մոսկվայի Յայկական կոմիտեի նանկատների և Եղբայրական օգնության կոմիտեի հաստատությունների ծախսերը: Ամերիկացիք իրավասու էին ստուգել վերոնշյալ կազմակերպությունների փաստաթղթերը, սակայն չեին կարող միջամտել դրանց ներքին կարգուկանոնին²⁰:

Ապրիլի 8-ի համաձայնագրից հետո Յ.Յուվերի ներկայացուցիչ Յ.Յեյնը ժամանում է Երևան և ամսի 28-ին հաստատում նույն պայմանները՝ իր և ՀՀ կառավարության ստորագրություններով²¹: Ամերկոմի հսկչների եզրակացություններին համահունչ՝ հանրապետությունը բնութագրվեց որպես վարկունակ՝ այն պայմանով, եթե պետությունը փող ստանա առնվազն 20 տարվա ժամկետով՝ տարեկան 5 տոկոսադրույթով: ԱՄՆ մասնագետների կարծիքով՝ ՀՀ-ն ավելի հուսալի էր, քան Եվրոպական շատ երկրներ, // -58 հետևաբար 2-3 խաղաղ տարիների ընթացքում ժողովուրդը հասնելու էր ինքնարավության: Միևնույն ժամանակ կազմվել էր ապագա վարկերը մարելու նպատակով արտահանման պիտանի ապրանքների ցուցակ: ՄԱԱՕԿ-ը բացում էր ոչ միայն որբանոցներ, այլև սննդակետեր, արհեստանոցներ:

Փարիզում գուգահեռաբար նշակում էին նպաստին առնչվող քաղաքական հարցեր: 1919թ. հունիսի 27-ին Յ.Յուվերը Տնտեսական գերագույն խորհրդի անունից Վ.Վիլսոնին առաջարկում է նշանակել Յաշտության կոնֆերանսի՝ Յայաստանի գծով հանձնակատար, որպեսզի նա հաղթական տերություններ ներկայացներ ՀՀ «փաստացի կառավարության հետ իրենց բոլոր հարաբերություններում»: Հանձնակատարին պատվիրել էին «ռուսական ու թուրքական Յայաստանով մեկ [կատարել] պետական տարբեր գործողությունների հսկողություն ու խորհուրդներ, ինչպես և նպաստի ու հայրենադարձության հարցերի հսկողություն մինչ այդ տարածքի քաղաքական

²⁰ ՀԱԱ, ֆ.205, գ.1, գ.619, թ.1-1 շրջ., ֆ.275, գ.5, գ.101, թ.20:

²¹ Նույն տեղում, ֆ.200, գ.1, գ.303, թ.13; Ս.Վրացյան, Յայաստանի Յանրապետություն: Երևան, Յայաստան, 1993, էջ 637-638:

վիճակի որոշումը»²²: Նման ձևակերպման պարագայում հանձնակատարին հարկավոր էր թեկուզ նվազագույն ոստիկանական ուժեր կամ բանակ: Նոր պաշտոնին համար առաջին թեկնածու էր հանդիսանում Եվրոպայում ամերիկյան արշավային զորքերի գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Ջ.Հարբորդը:

1919թ. հունիսի 28-ին Վ.Վիլսոնը շարադրեց այդ մտահղացումը Հաշտության կոնֆերանսի դեկավար ատյան՝ Չորսի խորհրդում: Սակայն, Եվրոպացիները սահմանափակեցին նրա նախաձեռնությունը՝ փաստաթղթից ջնջելով Արևմտյան Հայաստանին և հայրենադարձությանը վերաբերող ձևակերպումը²³: Մեկ օր անց Հ.Յուվերը կատարեց իր հաջորդ քայլը: Նա առաջարկում է անջատել հայրենադարձությունը «նպաստի և Հայաստանը կառավարելու»²⁴ հետ կապված խնդիրներից: //59 Նոր, սահմանափակ պաշտոնը ինքը վստահում էր իր իսկ ընտրյալին՝ ԱՄՆ-ի արշավային զորքերի 2-րդ բանակի ռազմական գործողությունների պետ և շտաբի պետի տեղակալ գնդապետ Վ.Հասկելին: Ամերիկյան պատվիրակությունը համաձայնեց, և Փարիզի վեհաժողովի Հինգի խորհուրդը ն.թ. հուլիսի 5-ին հաստատեց փոփոխված տարրերակը:

Գնդապետին իրավասությանը թողեցին բացառապես նպաստի հարցերը՝ առանց հայրենադարձության, ու միայն Անդրկովկասը՝ Արևմտյան Հայաստանում աշխատելու անհնարինության պայմանով, թեև մասնավոր բարեգործներն ու այնտեղ վերադարձած քարոզիչները եռանդագին շարունակում էին իրենց առաքելությունը: Առաջին՝ ապրիլյան համաձայնագրով նախատեսված կանոնավոր օգնությունը՝ 5 հազ. տ այլուրի տեսքով, Բարում է ժամանում 1919թ. մայիսի 22-ին միայն²⁵:

Հասարակական Ամերիկում, պետական ԱՆՎ-ի և միջազգային կարգավիճակ ստացած գերագույն հանձնակատար Վ.Հասկելի համագործակցության շրջանակներում Կոմիտեն պատրաստ էր վճարելու հանձնակատարի և նրան ենթակա ամերիկյան սպաների ռոճիկը: Ի դեպ, Եվրոպացիներին չեն ընդգրկում Վ.Հասկելի թիմում, քանզի Միացյալ Նահանգներին դիտում էին որպես Հայաստանի ապագա մանդատար և հատկապես ԱՄՆ-ից էին ակնկալում պարենի և հարկավոր գումարների հատկացում: Հետևաբար Ամերիկում ոչ միայն ստանձնել էր սկզբից 30, ավելի ուշ՝ 70 հոգու բոլոր ծախսերը, այլև ԱՆՎ-ին փոխանցեց իր ուժերով հավաքած նվիրատվությունների գորեթե 45 տոկոսը: Պետությունն էլ 1919թ. օգոստոսի 6-ին Կոնգրեսում ընդունեց մի օրենք՝ ՄԱՆ մեկուսախումբ (կորպորացիա) ստեղծելու և այն բարեգործության համար անհրաժեշտ միջոցներով ապահովելու մասին:

²² Երկու մեջբերումներ՝ Papers Relating to the Foreign Relations of the United States: The Paris Peace Conference, 1919, in 12 vols., vol.VI. Wash., GPO, 1946, p.744 (այսուհետև՝ Papers Relating, The Paris Peace Conference):

²³ Ibid., p.741.

²⁴ Papers Relating, 1919, in 2 vols., vol.II. Wash., GPO, 1934, p.826.

²⁵ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.355, թ.54:

Միայն ռազմանավերով անվճար փոխադրումների արժեքը գերազանցել է 6 մլն դրամը:

Զ.Մեյնի վկայությամբ՝ ՀՀ կառավարությունը պատրաստ էր երաշխավորել ամերիկյան փոխառությունը ոչ միայն հանքերով կամ տարբեր //60 ձեռնարկություններով, այլև իր ողջ ունեցվածքով: Ավելին, վարկ ստանալուց հետո, կառավարությունը 1920 թ. ամառը թողարկեց «Հայաստանի Անկախության փոխառության»²⁶ ու հավաքված գումարը 2,5 անգամ գերազանցեց երկու արտաքին պարտքը: Այն, դարասկզբի օրիասական պայմաններում բնակչությունը իր իշխանություններին էր վստահում անձնական խնայողությունները՝ տեղեկանալով ԱՄՆ-ի Գանձատան՝ ՀՀ կառավարությանը որպես խաղընկեր վերաբերվելու մասին:

Կոնգրեսի՝ ՄԱԱԾ-ին ԱՄՆ-ի վերանվանման և այն ԱՄՆ կորպորացիայի ձևափոխելուն վերաբերող օգոստոսյան վճիռի անմիջական արդյունքներից մեկը եղավ Փարիզյան նոր համաձայնագիրը: Այն կնքվեց նույն ամսի 7-ին ՀՀ մինիստր-նախագահ Յ.Քաջազնունու և Զիկագոյի միջազգային մեկուսախմբի (կորպորացիայի) միջև: Կողմերի կանխապայմանն էր եղել մեկուսախմբի կողմից Երևանի իշխանություններին 50 մլն դրամով ապրանքների մատակարարում²⁷: Բեռները հնարավոր էր ստանալ սեծովյան որևէ նավահանգստում կամ նյու Յորքում: Գների, ծավալների, տեսակազմի համաձայնեցման համար հատկացվում էր 4 ամիս: Նրանց ընդունման շուրջ ծառացած վեճերը պետք է հարթվեին 15-30 օրերում: Այլապես գործը հանձնում էին երկու մասնակիցների ուժերով կազմավորված դատարանին:

Վերջինը բաղկացած էր երեք հոգուց՝ մեկական անձ ՀՀ կառավարությունից ու մեկուսախմբից, իսկ երրորդը նշանակվում էր համատեղ որոշմամբ: Եռանդամ դատարանի վճիռն անբեկանելի էր և կատարվում էր անհապաղ: Համաձայնագրի վարձատրությունն ապահովելու համար դահլիճը թողարկում էր կիսամյա պետական դրամանիշներ (բոներ), որոնց ժամկետը կարելի էր երկարացնել երկու տարով՝ վճառելով տարեկան 6 տոկոս շահաբաժին, կամ միանվագ 12 տոկոս համախառն եկամուտը: ՀՀ Գանձատան բոները կամ կառավարա-//61 կամ ստացականները հանձնում էին ամերիկյան միջնորդ բանկին, իսկ նա վճարում էր Զիկագոյի միջազգայինին՝ ելնելով գործադրների կատարման չափից:

Ինչ վերաբերում է Գերագույն հանձնակատարին, ապա 1919թ. օգոստոսի 15-ին ինքը ժամանել է Թիֆլիս, իսկ ամսին 21-ին՝ Երևան²⁸, որտեղ ՀՀ մինիստր-նախագահի հետ առաջին անգամ գրուցելիս ամերիկացին հայտարարել է «Հայաստանի առկա սահմանները պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու» նրա մտադրության մասին: Ապահովելով նպատակի հասանելիությունը՝ Վ.Հասկելը պատրաստ էր «իր սպաներին ուղարկել

²⁶ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.588, թ.69-74; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թ.): Երևան, ՀՀ Ազգային ժողով, 1998, էջ 334-335:

²⁷ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.20, թ.152-155:

²⁸ Նույն տեղում, գ.362, թ.81:

Թուրքիա, որպեսզի նրանք, վերոնշյալ նպատակից բացի, այնտեղ (բացառությամբ Կիլիկիայի) պաշտպանեն մնացած հայերին»: Ավելին, գնդապետը որոշել էր հայտագիր հանձնել Բաքվի իշխանություններին, մի փաստաթուղթ, «որտեղ զավթողական քաղաքականության կամ Հայաստանի մահմեդականներին գրգռելու համար ամբողջ պատասխանատվությունը կղճի ադրբեջանական կառավարության վրա: Նրա տրամադրության տակ եղած փորձառու սպաների անձնակազմը»²⁹ հանձնվում էր ՀՀ դահլիճին՝ բանակի հրահանգիչներ, երկաթուղիների, պարենի ոլորտների վարիչներ դառնալու համար:

ՀՀ վարչապետի հետ գրուցում Գերագույն հանձնակատարը նշեց, որ ծրագրում է նպաստել Երևանին, «ռազմական հանդերձանք (փամփուշտ, հրացան) ստանալուն, իսկ վրաց կառավարությանը՝ այն իր ճանապարհներով անցկացնելուն»: Գույքացուցակում ներառված էին «Բաթում-Արդահանի վրայով [հասանելի] լրիկ համազգեստների բավական քանակը, ...150 ջորի-ներ՝ լծասարքով, Լեբելի հրացաններ»: Այնուտեհի ինքն իր առջև խնդիր էր դնում կարգավորել Անդրկովկասի տարածքային բոլոր վաճերը³⁰: ԱՄՆ-ի ավետարերը պատրաստվում էր չեզոք գոտիներ հաստատել կովախնձոր դարձած շրջաններում կամ նրանց ենթարկել ամերիկյան վարչությանը: Նա կտրականապես հրաժարվում էր քաղաքական բանակցությունների մտնել Շա-/-62 դուր-Նախիջևանի հետ, քանի որ այնտեղ պատերազմում էր թուրք գնդապետ Խալիլը: Ենիշտ է, նա չէր հավանում նաև Ա.Դենիկինի հետ սերտ համագործակցությունը, ընդունում էր միայն ռազմամթերք ձեռք բերելու կարելիությունը³¹:

Վ.Հասկելը վճռաբար պնդում էր, թե Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրությունից անջատելու խնդիրը «արդեն լուծվել է, այժմ մնաց միայն սահմանների և մանդատարի կարգումը»: Ընդ որում, գնդապետը «ամերիկյան ժողովողի միակ քաղաքական ներկայացուցիչ էր Կովկասում»³²: Ուշագրավ մի հանգամանք. նյութական նպաստի առնչությամբ ինքը թվարկել է ոչ միայն պահածոներ ու դեղամիջոցներ, այլև գյուղատնտեսական մեքենաներ՝ Մերձավոր Արևելքում Միացյան Նահանգների արտահանման ավանդական տեսակը: Հատկապես արևմտահայերը՝ քարոզիչների խնամարկյալ-խաղակիցները նրանց առաջին գնողներն էին եղել շատ մոտ անցյալում:

Գերագույն հանձնակատարի եռօրյա այցելությունը ներառել էր ամսի 22-ին կատարված Պառլամենտի այցելություն: Ամբողջությամ վերցրած, նրա առաջին շփումը «ճանաչողական» բնույթ ուներ: Թիֆլիս գնալուց հե-

²⁹ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.370, թ.1:

³⁰ Նույն տեղում, թ.1-1 շրջ.:

³¹ 1919թ. օգոստոսի 26-ին Ա.Խատիսյանն ու Ռ.Տեր-Մինասյանը մեկնել են Թիֆլիս, որտեղ Վ. Հասկելի միջնորդությամբ, թույլտվություն էին ստացել Ալեքսանդրապոլն անցկացնելու 1,7 մլն. փամփուշտ: Տե՛ս նույն տեղում, գ.362, թ.25-26:

³² Նույն տեղում, գ.370, թ.1 շրջ.: Տե՛ս նաև R.Hovannisian, op.cit., vol.II From Versailles to London, 1919-1920. Berkeley & Los Angeles, University of California Press, 1982, p.195-197:

տո նա պատրաստվում էր մեկշաբաթյա ժամկետում մի խումբ ամերիկյան սպաների հետ միասին վերադառնալ Յայաստան: Շարուր-Նախիջևանի վիճակով մտահոգված՝ գնդապետը ուղևորվում է Բաքու, ուր 1919թ. օգոստոսի 29-ին նա քննարկել է այս տարածաշրջանն ու Դարալազյազը որպես մեկ չեղոք գոտի միավորելու իր նախագիծը: Ն.թ. սեպտեմբերի 1-ին Ա.Խատիսյանին է ուղարկել նոր ծրագրին վերաբերող 21 կետերը, որոնք համաձայնեցված էին Ադրբեջանի կառավարության հետ: Յայաստանի վարչապետը պետք է համաձայնություն հայտներ այդ գոտին բոլոր Դաշնակիցների լիազոր՝ գեներալ-նահանգապետի վարչությանը //63 Ենթարկելու մտքին: Նոր միավորը ապառազմականացվում էր, իսկ տեղական իշխանություններին ընտրում էին բնակչությունը՝ ելնելով տվյալ վայրերի ազգային մեծամասնությունից: Գեներալ-նահանգապետը կարող էր ցանկացած աստիճանավորին հսկել և պաշտոնից անձակել:

Ըստ 5-րդ կետին՝ երկու կողմերն էլ հետ էին կանչում իրենց ծառայողներին, և այդ պահանջը տարածվում էր ոչ միայն Անդրկովկասի երկու հանրապետությունների, այլև ցանկացած՝ «այդ կողմերից մեկին համակիր»³³ պետությունների վրա: Ադրբեջանական իշխանությունները պարտավորվում էին խաղաղեցնել չեղոք գոտու և երևանի գավառի բնակիչ նրանց դավանակիցներին, իսկ ՅՅ դահլիճը՝ նույն գոտու և Զանգեզուրի իր հայրենակիցներին: Երևանը ստանձնում էր Շարուր-Դարալազյազով և Նախիջևանով ձգված երկաթուղու վարչությունը: Սակայն դրա փոխարեն Բաքուն ստանում էր Զուլֆային հասնող ճյուղի կառուցման ու շահագործման մենաշնորհը: Որպես հատուցում՝ նա այլևս չէր խոշնդրութելու Ամերկոմի՝ Զանգեզուր ու Շուշիի գավառ պարենի առաքումներին, պետք է լրացներ չեղոք գոտու գանձարանի հնարավոր պակասը, դուրս տաներ թաթար բնակիչներին Վեդիից, ինչպես նաև փոխադրամիջոցներ էր տրամադրելու նահանգապետությանը գավառներ վերադարձող հայ փախստականների համար:

Իր ստորագրության փոխարեն, Յայաստանի Դանրապետության Նախարարների խորհուրդը գումարում է մի նիստ³⁴ և Ա.Խատիսյանին շտապ գործուղում Թիֆլիս, որտեղ սեպտեմբերի 6-ից 14-ը վարչապետը վեց հանդիպում է ունենում նախագծի հեղինակի հետ: Ն.Ռևոլյուցիոնը նմանապես ժամանում է Վրաստանի մայրաքաղաք՝ նոր առաջարկներով ու կետերի լրացումներով: Վերջինի պնդմանը՝ բնակչությունը մնալու էր զինված, իսկ նահանգապետը զրկվելու էր պաշտոնյաներին արձակելու իրավունքից: Բաքուն ոչ միայն լրավճարներ էր հատուցելու, այլև ապահովելու էր //64 սեփական մուրհակների (բոների) շրջանառությունը՝ ամրագրելով քաղաքից մինչև Զուլֆա կառուցվելիք գծի մենաշնորհը: Դրա փոխարեն Ադրբեջանը

³³ ՀԱԱ, ֆ.275, գ.5, գ.101, թ.88:

³⁴ Նույն տեղում, ֆ.200, գ.1, գ.22, թ.209; ֆ.206, գ.1, գ.27, թ.288; Յայաստանի Դանրապետությունը 1918-1920թթ.: (Քաղաքական պատմություն): Փաստաթթերի և նյութերի ժողովածու: Խմբ.4.Գալոյան, Վ.Ղազախեցյան: Երևան, Գիտություն, 2000, էջ 121 (այսուհետև՝ Յայաստանի Դանրապետությունը 1918-1920թթ.):

ընդունում էր ՀՀ-ի գերիշխանությունը Դարավագյազում³⁵:

Բանակցությունների ժամանակ Վ.Հասկելը ամբողջությամբ ընդունեց ՀՀ տեսակետն ու կրծատեց իր ցանկը մինչև ինն կետ: Վերջնական տեսկով ամերիկյան գոտին ընդգրկում էր միայն Շարուր-Նախիջևանը, վարչական բոլոր ծախսները կատարում էր ԱՄՆ-ը կամ մարում էին համատեղ: Վեդիում առկա բնակչությունը զինաթափավում էր, իսկ Զուլֆա տանող երկաթուղային ճյուղի շինարարությունը պետք էր համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության հետ առանձին պայմանագրով: Երկուկողմ քննարկումների ժամանակ Վ.Հասկելը հաստատում է Զանգեզուրի միանշանակ հայկական երկրամաս լինել ը և Ա.Խատիսյանին առաջարկում օգտվել Ա.Դեմիկինի կամավորական բանակի ծառայություններից առանց պաշտոնական պայմանագրեր կապելու: Նա ընդունեց, որ «մոտ ժամանակներում գործի ժամանումը չէր սպասվում»³⁶, թեև չէր բացառում հույնների միջամտությունը: Միաժամանակ դժգոհել է տեղի մանուլում իր ասածների ոչ միշտ լիարժեք թարգմանություններից ու երեք հանրապետությունների կառավարություններին խնդրել է «չիրապարակել ու թերթերում չտպագրել իր ելույթները, կարծիքները և որոշումները՝ ընդհանրապես իր գործունեությանը վերաբերող տեղեկությունները, առանց իր հմացության ու հավանության»³⁷:

Շուտով՝ սեպտեմբերի 21-24-ին, Գերագույն հանձնակատարը կրկին այցելում է Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա և Երևան, որտեղ ամսի 23-ին գումարվեց Նախարարների խորհրդի նիստ: Կողմերը քննարկում են Պարսկաստան տանող երկաթուղու, դպրոցական շենքերը պետությանը վերադարձնելու և դրանցում ուսման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև Զանգեզուրի դեմ ուղղված՝ ադրբեջանական ռազմատենչ, զավթողական վարմունքի հարցերը: //65 Մենք սովորաբար շեշտադրում ենք Վ.Հասկելի գործունեության մարդասիրական կողմը՝ միաժամանակ ստվերի տակ թողնելով նրա վարչական ու քաղաքա-կան աշխատանքը: Այնինչ Անդրկովկասում ծևավորվում էր հիմնարկների միասնական համակարգ, իսկ ինքը՝ գնդապետը, եռանդով մասնակցում էր երկրամասի, հատկապես Նախիջևանի կոնժի կարգավորմանը՝ ամենասկզբից ընդգծելով այդ շրջանի հայկական պատկանելությունը:

Կազմակերպչական առումով, հասարակական Ամերկոմի, պետական ԱՆՎ-ի և Վ.Հասկելի անձով մարմնավորված միջազգային ատյանի համատեղ ուժերով 1919թ. աշնանը ՀՀ-ում արդեն իսկ ծևավորվել և գործում էր նպաստի կենտրոնացված և արդյունավետ համակարգը՝ օրենսդիր հենարանով, ՄԱԱԾ-ի և ՀՀ կառավարության միջև կնքված երկկողմ համաձայնագրով, 46 որբանոցներով, հիվանդանոցներով, հացի փուերով, սննդակետերով, արհեստանոցներով ու նույնիսկ սեփական ոստիկանությամբ հան-

³⁵ ՀԱԱ, ֆ.275, գ.5, գ.101, թ.90 շոջ.:

³⁶ Նույն տեղում, թ.91:

³⁷ Նույն տեղում, ֆ.200, գ.1, գ.175, թ.55:

դերձ: Թեև վերջինը, ինչպես և Ամերկոմի՝ պետությանը ներկայացված պահանջին՝ չխառնվել ողբերի ուսման գործին, դեմ էր ՀՀ կառավարությունը:

Ինչպես հնչել է ՄԱՆ-ի 1919թ. հոկտեմբերյան համագումարում, նրա բարեգործությունը համակեց 630 հազ. մերձարևելյան բնակիչ³⁸: ՀՀ-ի առնչությամբ, ելնելով Կոմիտեի դավանած սկզբունքներից, նաև դժգոհություն չառաջացնելու համար կազմակերպությունը օժանդակում էր արևմտահայերին և ներքին՝ Կարսի մարզից, Նախիջևանից, Գանձակից փախած անձանց հավասար չափերով: Արևելահայ տուժածները եղել են ազգամիջյան այն կոհիների զոհերը, որոնք 1919թ. ամբողջ ամռանը պատել էին նույնիսկ Երևանի արվարձանները՝ այն ժամանակվա Զարբախն՝ որպես առանձին գյուղը, կամ Զանգիբրասարը: //66

Այդ տարվա աշնան դրությամբ ՄԱՆ-ը իր կենտրոնական գրասենյակում ձևավորեց հինգ բաժին՝ 1) վարչական, 2) ընթացիկ պայմանների և կարիքների գնահատման, 3) որբանոցների, հիվանդանոցների և արհեստանոցների աշխատանքի, 4) գնումների, պահեստավորման, ստուգման և բաշխման, 5) բյուջետային վճարումների պատրաստման, ստուգման ու փոխանակման: Ամերկոմին հաշվետու վեց տարածաշրջանային կենտրոնները գետեղված էին Բաթումում, Կարսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ղարաբիլիսում ու Թիֆլիսում: Ալեքսանդրապոլում բացվեց Երկու մեծ պահեստ: Կոմիտեն կատարեց ամսեկան 8 մլն դոլարի գործառնություն և բաշխեց 5 հազ. տոննա հացահատիկ: 1920թ. համար նախատեսվել էր ամսեկան մատակարարումը հասցնել 7 հազ. տոննայի: Ընդ որում, Հայաստանը օգտվում էր արտոնյալ գներից. նրա համար հաստատել էին մեկ շնչին հասնող ամենամեծ (կրկնակի) օրաբաժինը³⁹, ու մեր հանրապետությունը ի վիճակի չէր առանց դրսի օգնության Բաթումից փոխադրել բեռները: Վերոնշյալ վեց քաղաքներում Ամերկոմի աշխատակիցների կողքին կային նաև ԱՆՎ-ի սպաներ: Նրանք վրդովված գեկուցուն էին Փարիզ, Վաշինգտոն և Սյու Յորք, Վրաստանի՝ տարանցմանը հարուցած արգելքների և չափից բարձր տուրքերի մասին: Դրանք հասնում էին բեռների մեկ երրորդից մինչև կեսի: Հ.Յուվերը «բացարիկ ավագակություն [է որակել] նրա շեմին մեռնող բնակչության դեմ ուղղված» այդ վարմունքը⁴⁰: //67

Հոկտեմբերի 7-ին Վ.Շասկելը տիֆով հիվանդ կնոջ ու Զ.Զարբորդի առաքելության հետ միասին, մեկնում է Կ.Պոլիս և Փարիզ: Գնդապետը մեկ

³⁸ «Հայրենիք», Բոստոն, հատ.XIII, 18.10.1919; պատվում է ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.525, թ.4:

³⁹ ՀԱԱ, ֆ.275, գ.5, գ.91, թ.140 և ֆ.200, գ.1, գ.193, թ.332: Այդ օրաբաժինը հավասար էր 453 գ այսուրի՝ աշխատող շնչին, ու 225 գ՝ խնամարկյալներին: Դա կամ հացահատիկը տալիս էին շաբաթը մեկ անգամ, արևմտահայերին թույլատրվում էր հատկացնել տասնօրյա մթերաբաժինը՝ միանգամից: Քանի որ այսուրը ապահովում էր 40 տոկոսի թիսած, պատրաստի հացը ստանում էին 180 կամ 90 գրամով ավելի: Օրական ուտելիքի կրկնակի չափաբաժնին վերաբերող տվյալները գտնվում են Հ.Յուվերի նամականու մեջ, որը մենք գտել ենք Հայաստանի ազգային արխիվում ու հրատարակել՝ Գիտական աշխատություններ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, հ.XIX, 2016, Գյումրի, էջ 112 և 107:

⁴⁰ Papers Relating, The Paris Peace Conference, vol.X. Wash., GPO, 1947, p.482.

ամսից ավելի անցկացրեց ֆրասիայի մայրաքաղաքում, որտեղ նա պնդել էր ռազմական բաղադրիչի, իր լիազորությանները Անդրկովկասի բոլոր պետությունների վրա ընդարձակելու և մարդասիրական ծրագրի երկարաձգելու վրա: Նոյեմբերի 15-ին նրա երկրորդ պահանջը բավարարվել է, իսկ նախօրյակին՝ ամսի 14-ին, Վ.Վիլսոնը արտոնել է Հայաստանին վարկով վաճառել 35 հազ. տ ցորեն և այսուր: Այս նվաճամները շահած՝ ամերիկացին ն.թ. դեկտեմբերի 1-ին վերադարձել է Թիֆլիս, իսկ ամսի 3-ին՝ Երևան⁴¹:

Ամրացնելով Վ.Հասկելի փաստարկները՝ 1919թ. նոյեմբերի 11-ին ՄԱՍ-ի գործադիր կոմիտեն էլ գեկուցում է պետքարտուղար Ռ.Լանսինգին, որ նպաստի պետական ծրագիրը հնարավոր չէր ավարտել ընթացիկ տարվա վերջին: Նման որոշման դեպքում 700-800 հազ. խնամարկյալներից 25 տոկոսը կարող էին կործանվել⁴²: Քետևաբար, նպաստը հարկավոր էր շարունակել մինչև 1920թ. բերքահավաքը: Կոմիտեն պատրաստ էր ԱՄՆ կառավարությանը տրամադրել իր բոլոր մարդկային և նյութական միջոնները: Փակագծերում նշենք, որ ՄԱՍ-ի կարծիքը չի մերժվել, և նպաստամատուց աշխատանքը երկարաձգել են ևս յոթ ամբողջ մինչև 1920թ. օգոստոսի 1-ը:

Քաղաքական ոլորտին վերաբերյալ նշենք հետևյալը. 1919թ. հոկտեմբերի 3-ին կայացել է հայ-վրացական համաձայնագիրը՝ Գերագույն հանձնակատարի պաշտոնակատար Զ.Ռիայի և մայոր Զ.Լիվինգստոնի աջակցությամբ: Այդ վավերագիրը վերաբերվում էր Ալեքսանդրապոլ-Բաթում երկարուղու անխափան և անմաքս շահագործմանը: Ըստ փաստաթղթի՝ պարենային կառախմբերը անբողջությամբ անցնում էին Ամերկոմի ենթակայության //68 և 24 ժամ անց պետք է վերադառնային վրաստանի եզրերոց⁴³: Արձագանքելով Հայաստանի Հանրապետության իշխանության դիմումին՝ ամերիկացիք անմիջապես ուղարկում են Է.Յարոսուին Զանգեզուր՝ որպես իրենց ներկայացուցիչ⁴⁴: Այնուհետև՝ 1919թ. հոկտեմբերի 23-ին, հրապարակվում է «Հայտարարություն՝ Շարուր-Նախիջևանի ամերիկյան նահանգապետություն ստեղծելու մասին»⁴⁵: Ըստ այդմ՝ երկու կառավարությունները համաձայն էին նման վարչական միավորում ձևավորելու:

Նոր նահանգապետ գնդապետ Է.Լ.Դելին իրավասու էր նշանակել կենտրոնական խորհրդի կազմը՝ ելնելով երկու շրջանների ազգային պատկերից.

⁴¹ Պ.Օվաննիսյան, Международные отношения Республики Армения 1918-1920 гг. Ереван, Тигран Меց, 207, с.240, 300-301; Армения в документах, с.279, 349, 352-353, 358.

⁴² US NA RG 59, 860J.48/8/f.1-2, T1192/Roll 7/նհ 36.

⁴³ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.353, թ.67-68 և ոռևերեն տեքստը՝ թ.66: Տե՛ս նաև US NA, RG 59, 860J.48/1; T1192/Roll 7/f.93/նհ 36; ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.366, թ.7:

⁴⁴ Նույն տեղում, ֆ.կ.1021, գ.2, թ.127:

⁴⁵ Նույն տեղում, ֆ.200, գ.1, գ.357, թ.520:

⁴⁶ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.212, թ.186-188: Բաքվի իշխանությունների համաձայնության մասին՝ US NA, RG 256, 184.021/309-310/f.1, M820/Reel 232/նհ 4 և Արմենիա в документах, с.260, 262: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 134-135-ում փաստաթղթն ունի հոկտեմբերի 25-ի ամսաթիվը: Այն, որ առաջին տվյալն ավելի ստույգ է, հաստատում է ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.395, թ.5, ինչպես և Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 139:

վարչական բոլոր ծախքերը կատարվումէին տեղական հարկերի գումարներից: Անուհետև Է.Դելին ամբողջ ապառազմականացված գոտիով մեկ կարող էր նշանակել ընտրությունների օրը, թեև ընտրություններից հետո էլ ամերիկացին պահպանում էր իրեն ենթակա միավորի ցանկացած ծառայողին պաշտոնանկ անելու հնարավորությունը: Երկարուղին ու հեռագրաթելը մտնում էին ՀՀ կապի և տրանսպորտի համակարգ ի մեջ, սակայն բնակչությունը մնացել էր զինված:

Վ.Դասկելը չէր սահմանափակվում Զանգեզուրում հայկական գերիշխանության ճանաչումով կամ Նախիջևանին սուկ նպաստի առաքումներով: Նա, այլ բարեգործները, Պետրեպարտամենտի աշխատակիցները, Փարիզի ամերիկյան պատգամավորներն ու Կոնգրեսի օրենսդիրները երբեք չեն թաքցնում Երկրորդ շրջանի հայկական պատկանելությունը⁴⁷ կամ //69 ադրբեջանական ու թուրքական գորքերի համագործակցությունը այդ վայրում: Փարիզ ու Վաշինգտոն առաքված ազդագրերը հաճախ հիշատակում էին Նախիջևանում մահմեդական ջոկատների շտարի պետ, օսմանյան բանակի գնդապետ Խալիլ բեյի անունը: Ու եթե տեղական ջոկատները՝ Բաքվի իշխանություններով հանդերձ, հակված էին զիջողության Դանշակիցների ներկայացուցչի հանդեպ, ապա Խալիլ բեյը կալանավորել և ուժ էր կիրառել ժամանող ամերիկացիների նկատմամբ: Նա չճանաչեց նորանշանակ նահանգապետ գնդապետ Է.Դելիին ու նրան կոչեց պարզապես «նպաստամատույց սպա»:

Փաստենք, որ հատկապես Գերագույն հանձնակատարության միջնորդությամբ ու նրա ճնշման ներքո և, իհարկե, Արսեն Շահմազյանի 1919թ. նոյեմբերի 4-12-ին Զանգեզուրի մարտում տարած հաղթանակից հետո Աջրեջանի կառավարությունը նոյեմբերի 23-ին ՀՀ-ի հետ Թիֆլիսում կնքեց միմյանց վրա չհարձակվելու պայմանագիր: Ինչպես գիտենք, Ա.Շահմազյանի հասցրած ջախջախումից հաշված օրերում՝ նոյեմբերի 16-ին, Բաքու է գործուղվում ամերիկացի մայոր Պ.Կելլոչը: Նա իսկույն ստացավ ադրբեջանական կողմի համաձայնությունը՝ սեփական հարձակմանը վերջ տալու: Պ.Կելլոչի հեռագրից հետո Գերագույն հանձնակատարի պաշտոնակատարը երկու վարչապետներին հրավիրում է ն.թ. նոյեմբերի 20-ին ժամանել Թիֆլիս ու նստել բանակցությունների սեղանին շուրջ⁴⁸:

Ըստ 1919թ. նոյեմբերի 23-ին ստորագրած հայ-ադրբեջանական համաձայնագրի՝ կողմերը պարտավորվել են բացել Զանգեզուր տանող ճանա-

⁴⁷ Տե՛ս օրինակ Հայաստան գործուղվաց ամերիկյան զինվորական առաքելության պետ գեներալ-մայոր Զ.Յարբորդի՝ Փարիզում ԱՄՆ դիվանագիտական առաքելության դեկավար Ֆ.Պոլկին հասցեագրած 1919թ. հոկտեմբերի 6-ի հեռագիրը՝ US NA, RG 59, 184.02/307/f.2, M820/Roll 232/ն 4: Հրապարակվել է Արմենիա և Հայաստան մասին պատմություններում:

⁴⁸ Տե՛ս Գերագույն հանձնակատարի պաշտոնակատար Զ.Ռիայի՝ Թուրքիայում ԱՄՆ Գերագույն հանձնակատար դերծովակալ Մ.Բրիստոլին ու պետքարտուղար Ռ.Լանսինգին ներկայացված 1919թ. դեկտեմբերի 1-ի հաշվետվությունը՝ US NA, RG 59, 860J.01/180/Encl.1/f.5-6, T1192/Roll 2/ն 38:

պարհները, խաղաղ բանակցությունների եղանակով վերջ տալ ընդհարումներին կամ վեճը չկարգավորելու դեպքում դիմել իրավարարին: Փաստաթուղթը ուժի մեջ էր մտնում ստորագրման պահից, բայց ենթակա էր վավերացման: Յուրաքանչյուր խնդրի հիմնական և չեզոք իրավարար է ճանաչվել Գերագույն հանձնակատարի պաշտոնակատար Զ.Ռիան: //70 Տվյալ համաձայնագիրն իրականացվել է հատկապես նրա ու վրաց արտգործնախարար Ե.Գեգեչկորու վկայությամբ⁴⁹: Վավերագիրն, անշուշտ, պարբերաբար խախտվում էր, սակայն, այնուամենայնիվ, որոշակի զապող դեր կատարեց թեժ և անողոք հետագա բախումներում:

Վ.Հասկելը բոլորովին այլ վերաբերմունք է դրսևորել տեղական բախումների հանդեպ Կ.Պոլիս և Փարիզ երկամյա շրջագայության ավարտին: Նա Զանգեզուրի և Նախիջևանի կարգավիճակի շուրջ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգույանի հետ Թիֆլիսում սակարկելու փորձ արեց: Այդ նախաձեռնության մասին գեկուցումն ընթերցելիս, Ա.Խատիսյանը խստորեն պատասխանել է, թե Ազգային խորհրդի իշխանությունը Զանգեզուրում և գեներալ-նահանգապետությունը Նախիջևանում «Հայաստանի վիրջին զիջում» են: Այդ հարցի ցանկացած չարաշահում կամ շինծու նորմուծություն «ժողովրդական խռովություն կառաջացնի, [այն] հակասում է անգլիացիների, Զ.Ռիայի և նույն ինքն՝ Վ.Հասկելի կարգադրություններին»⁵⁰:

Տասն օր անց՝ դեկտեմբերի 18-ից 21-ը, Գերագույն հանձնակատարը ժամանում է Հայստան և այցելում Կարս, Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա: Ուղևորության առաջին օրը նա Երևանում հանդիպում է Ա.Խատիսյանին, ֆինանսների և պարենավորման նախարար Ս.Արարատյանին, խնամատարության և աշխատանքի նախարար Ա.Բաբայանին: Հանձնակատարին ուղեկցում էին ՀՀ-ում նրա ներկայացուցիչ գնդապետ Զ.Տելֆորդը, քաղաքական բաժանմունքի պետ մայոր Պ.Կելլոչը, մատակարարումների գծով պետ Յուլիան⁵¹: //71 Երեկոյան ժամը 5-ից 11-ը ձգված բանավեճերում հանրապետության իշխանությունները դժգոհում էին իրենց պարենի բաշխումներից անմասն պահելու համար:

Ըստ նրանց՝ միայն կառավարությունը կարող էր խտացրած կաթ, լոբի և հագուստ վաճառել: ճիշտ է, դեկտեմբերյան բեռների 44 տոկոսը անհատույց նվիրատվություններն էին, սակայն մնացածը ծածկվում էր Երկարաժամկետ վարկերով, այդ թվում՝ 11,5 մլն դոլարի տված մուրհակներով⁵²: Այդ առումով իշխանությունները իրոք չէին կարող զերց մնալ այնքան կարևոր գործից: Հանձնակատարը համաձայնել է նախարարների տեսակետին ու կարգադրել ՄԱՍ-ի շրջանային բոլոր պետերին զատել իրենց շտեմարաններից:

⁴⁹ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.282, թ.35-36; US NA, RG 59, 860J.01/180/Encl.7, T1192/Roll 2/մհ 38; Нагорный Карабах в 1918-1923 гг. Сб.док.и мат. Под ред.В.А.Микаеляна. Ереван, АН Армении, 1992, с.352-353; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 140-141:

⁵⁰ Երկու մեջբերումները՝ ՀԱԱ, ֆ.275, գ.5, գ.101, թ.94:

⁵¹ Այս խորհրդակցության մասին հաշվետվությունը տես՝ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.638, թ.1-2:

⁵² Նույն տեղում, գ.362, թ.99:

րում պահպող պարենը Նպաստամատույցի գույքից: Որպես հավելում՝ Արմենկոմը կառավարության է փոխանցել նաև մանկական սննդի և օճառի բոլոր պաշարները⁵³:

Երկու կողմերը տեղյակ էին ՀՀ-ում ԱՆՎ-ի գործունեությունը 1919թ. վերջին ավարտելու մասին: Ուստի նրանք մանրամասն վերլուծում էին ցանկի և ինքնաբավ դառնալու հետ կապված դժվարությունները: Յյուսիսային Կովկասի իշխանությունները չէին կամենում վրացական շուկայում ցորեն վաճառել. Վ.Դասկելը հանձ արավ ապահովել նրա տարանցումը Հայաստան ամերիկյան դրոշի ներքո: Նա խոստացել է նաև Յյուսիսային Կովկասից ՀՀ անցկացնել հայկական այն զորամասերը, որոնք պատրաստ էին լրացնել ազգային բանակի շարքերը: Չեր առարկում նաև զինյալ ուժերին բրիտանացի հրահանգիչներ վարձելու: Կառավարությունը, իր հերթին, Գերագույն հանձնակատարին տեղեկացրել էր Կողը մնտելու իր մտադրության մասին: Սա աղիհանքերի շահագործման և բամբակի արտահանման հնարավորություն էր ընձեռում:

Ամբողջությամբ վերցրած, Վ.Դասկելը ծգտում էր առաջ մղել ու հաստատել սեփական երկրի շահերը, սակայն դա հնարավոր չէր անել ռազմական ուժի բացակայության պատճառով: Ինքը և Ամերկոմի անդամները վերադասատյաններին հղած պաշտոնական գեկույցներում ընդգծում էին, //72 թե որքան շատ կառողջանար հասարակական միջավայրը՝ գոնե մեկ հետևակային գունդը կամ բրիգադը նրան տրամադրելու պարագայում:

Որպես եզրահանգում կարելի է փաստել. Արևմտյան Հայաստանի հայությանը ու ՀՀ փախստականներին հասցրած ԱՄՆ-ի նպաստը սուկ բարեգործություն չէր, այլ մարդասիրական ներխուժում և հետագա բազմաթիվ գործողությունների նախատիպ: Նպաստամատույց ծրագրերը եղել են տարածաշրջանը ոչուազմական միջոցներով, գլխավորապես տնտեսական թափանցման ամերիկյան քաղաքականության բաղադրիչ: Գործելու նման եղանակը պայմանավորված էր ոչ թե շահերի բացակայությամբ, այլ տվյալ պահի իրադրությամբ: Միևնույն ժամանակ, պետության ղեկավար դերն ու նպաստի գործին նրա համապարփակ ներգրավումը ՀՀ կառավարության սին հույսեր ու չափից վառ սպասելիքներ էին ներշնչում: Թեև 1919թ. նոյեմբերի 19-ի դրությամբ, երբ ԱՄՆ Ծերակույտն առաջին անգամ բացահայտ և պաշտոնապես ժխտեց նախագահ Վ.Վիլսոնի քաղաքականությունը Վերսալի պայմանագրի հարցում, Հայստանի Հանրապետության իշխանությունները պարտավոր էին եզրակացնելության հանգել և փոփոխություններ կատարել արտերկրի հետ իրենց միջազգային հարաբերություններում: //73

©

17 էջ

Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, հ. 18: Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ին-տ, 2017, էջ 49-75 (հրապարակվել է ռուսերեն):

⁵³ ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.638, թ.6: